

COVID-19 համավարակի համատեքստում փախստականների պաշտպանության հետ կապված մտահոգությունների լուծմանն ուղղված գործնական առաջարկություններ և հաջողված պրակտիկա

1. Ներածություն

COVID-19 համավարակը Եվրոպայի պետություններին կանգնեցրել է հանրային առողջությանն առնչվող արտասովոր և աննախադեպ արտակարգ իրավիճակի առջև: Ի պատասխան՝ պետությունները ձեռնարկում են վիրուսի տարածման կանխարգելմանը և իրենց բնակչության պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ և օրինաչափ միջոցներ: Այս միջոցներից որոշները ձեռնարկվել են հայտարարված արտակարգ դրության համատեքստում՝ արտակարգ դրությունը կանոնակարգող կոնկրետ ազգային իրավական դրույթների հիման վրա:

Ի պատասխան ընթացիկ ճգնաժամի և դրա հետ կապված՝ պետությունների առջև ծառայած բացառիկ մարտահրավերներին՝ այս փաստաթղթի նպատակն է կառավարություններին առաջարկել մի շարք գործնական նկատառումներ և կոնկրետ խորհուրդներ, որոնք թույլ կտան արդյունավետ արձագանք ցուցաբերել համավարակին՝ միաժամանակ պահպանելով փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերն ու չափանիշները¹: Այս նկատառումները և խորհուրդները նաև կիրառելի են քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ՝ փաստաթղթավորման հասանելիության կամ ապաքաղաքացիության որոշման ընթացակարգերի համատեքստում:

Սույն փաստաթղթին անդրադառնում է Եվրոպայում և դրա սահմաններից դուրս ձևավորվող պետական պրակտիկային, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ-ի գործառնական փորձին բարդ արտակարգ իրավիճակներում, այդ թվում՝ համաճարակների ժամանակ ապաստան հայցողների և փախստականների ժամանումը կառավարելու հարցում:

Սույն փաստաթղթում ներկայացված առաջարկությունները կարող են նաև պետություններին օգնել համակարգերը զարգացող իրավիճակին հարմարեցնելու և փախստականների կարգավիճակի որոշման (ՓԿՈ) և հաշվառման աշխատանքների հետ կապված կուտակումները, ինչպես նաև երկար ժամանակով չհստակեցված կամ անկանոն կարգավիճակ ունեցող անձանց թվի աճը կանխելու հարցում: Նման

¹ COVID-19-ի համատեքստում երկրի տարածք մուտք գործելը և ապաստանի հասանելիությունը կարգավորող իրավական շրջանակը ներկայացված է 2020 թվականի մարտի 16-ի «ՄԱԿ ՓԳՀ-ի հիմնական իրավական նկատառումները COVID-19-ին արձագանքման համատեքստում երկրի տարածք մուտք գործելու վերաբերյալ» փաստաթղթում, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5e7132834.html>, և որին այստեղ անդրադարձ չի կատարվում:

գործողությունները կարող են նաև նպաստել իրավիճակի առաջընթաց կարգավորմանը հանրային առողջությանն առնչվող արտակարգ իրավիճակի ավարտից հետո:

ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցչությունները պատրաստ են այս հարցում տեխնիկական աջակցություն տրամադրելու իրենց կառավարական գործընկերներին, ինչպես նաև այս փաստաթղթում ներկայացված առաջարկությունները հարմարեցնելու յուրաքանչյուր պետությունում տիրող կոնկրետ իրավիճակին: Նման աջակցությունը կարող է զուգակցվել կամ լրացվել այս շահագրգիռ կառույցների, ինչպես օրինակ՝ Ապաստանի հարցերով աջակցության եվրոպական գրասենյակի (EASO) կողմից տրամադրվող աջակցությամբ²:

2. Երկրի տարածք մուտքի ապահովումը հանրային առողջության պահպանման պայմաններում

COVID-19 համավարակը պահանջում է, որ պետությունները բացառիկ միջոցներ կիրառեն վիրուսի տարածումը կանխելու և հանրային առողջությունը պահպանելու ուղղությամբ, այդ թվում՝ իրենց սահմաններ ապաստան հայցողների ժամանման դեպքում: Նման միջոցները կիրառվում են՝ բոլորի, այդ թվում՝ հենց իրենց՝ ապաստան հայցողների շահերից ելնելով:

Ուստի ընթացիկ համատեքստում ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է ապաստան հայցողների ժամանումն ապահով կերպով կառավարելու համար դիտարկել հետևյալ միջոցառումները³.

- **Բժշկական սքրինինգներ կամ թեստավորում**, որոնք կարող են ներառել տեսողական զննություն, մարմնի ջերմաստիճանի չափում, հարցաշարեր ուղևորների համար և/կամ առողջական վիճակի մասին տեղեկանքների ներկայացում, ինչպես նաև բժշկական և լաբորատոր քննություն բուժանձնակազմի կողմից, որը պետք է իրականացվի ոչ խտրական կերպով՝ Առողջության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և ազգային առողջապահական մարմինների ուղղորդմամբ:
- **Կարանտին**՝ բնակչության մնացած հատվածից կանխարգելիչ և ժամանակավոր (սովորաբար 14-օրյա) առանձնացման տեսքով, որն

² Ապաստանի հարցերով աջակցության եվրոպական գրասենյակի կողմից առաջարկվող աջակցության տեսակների ընդհանուր նկարագրության համար տես՝ <https://easo.europa.eu/operational-support/types-operations>:

³ Հիվանդ ուղևորների կառավարումը մուտքի կետերում (միջազգային օդանավակայաններ, նավահանգիստներ և ցամաքային սահմանի անցման կետեր) COVID-19-ի համատեքստում, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331512/WHO-2019-nCoV-POEmgmt-2020.2-eng.pdf> :

իրականացվում է ոչ խտրական և համաչափ կերպով՝ որպես հնարավոր ախտանշանները մշտադիտարկելու և վիրուսի վաղ հայտնաբերումն ապահովելու միջոց⁴:

- Եթե կիրառվում են մուտքի արգելքներ, կամ սահմանները փակվում են, **հարկավոր է դիտարկել ապաստան հայցողներին այդ սահմանափակումների կիրառումից հստակորեն ազատելու հարցը** վերոնշյալ ուժեղացված առողջապահական միջոցառումների կիրառումն ապահովելուն զուգահեռ: Եթե ապաստան հայցողներ են ցանկանում երկիր մուտք գործել մեկ այլ ԵՄ անդամ պետությունից կամ Շենգենյան գոտու պետությունից, մուտքի ցանկացած մերժում պետք է համաձայնեցվի այդ պետության հետ՝ այդ պետությունում անհատի համար ապաստանի հասանելիությունն ապահովելու նպատակով: Եթե չի գործում սահմանափակումներից ընդհանուր ազատում, կոնկրետ դեպքերում պետք է թույլատրվի մուտք գործել երկրի տարածք՝ ապահովելով չվերադարձելիության սկզբունքի պահպանումը:

Այս այլընտրանքային միջոցառումները պաշտպանում են հանրային առողջությունը՝ միաժամանակ երկրի տարածք մուտքի հասանելիությունն ապահովելով միջազգային պաշտպանություն հայցող անձանց համար և վերջիններիս պաշտպանելով վերադարձվելու վտանգից: Այս առումով ՄԱԿ ՓԳՀ-ն ճանաչում է սահմանների փակումից և մուտքի արգելքներից միջազգային պաշտպանություն հայցող անձանց հստակ կերպով ազատելու ձևավորվող պետական պրակտիկան, որ առկա է բազմաթիվ եվրոպական երկրներում: Սահմանների փակումը կարող է նաև վնասել հանրային առողջապահության շահերին, քանի որ դրա արդյունքում կարող են ավելանալ անկանոն տեղաշարժերը՝ ավելի բարդացնելով պետական մարմինների՝ համավարակը կանխելուն և դրան արձագանքելուն ուղղված ջանքերը:

Պետական պրակտիկայի օրինակներ

Բազմաթիվ եվրոպական երկրներում, այդ թվում՝ **Խորվաթիայում, Չեխիայի Հանրապետությունում, Հունաստանում, Իռլանդիայում, Իտալիայում, Մալթայում, Մոլդովայում, Լեհաստանում, Սերբիայում և Սլովենիայում**, նոր ժամանած անձանց համար սահմանին գործում է պարտադիր կարանտին: **Դանիայում** կարանտինը կիրառվում է միայն այն դեպքերում, երբ կա բժշկական ցուցում:

⁴ ԱՀԿ, Կորոնավիրուսի (COVID-19) կանխարգելման համատեքստում անձանց կարանտինին առնչվող նկատառումներ, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.who.int/publications-detail/considerations-for-quarantine-of-individuals-in-the-context-of-containment-for-coronavirus-disease-\(covid-19\)](https://www.who.int/publications-detail/considerations-for-quarantine-of-individuals-in-the-context-of-containment-for-coronavirus-disease-(covid-19)):

Նաև իրականացվում են մարմնի ջերմաստիճանի չափումներ և բժշկական սքրինինգի այլ տեսակներ, այդ թվում, օրինակ, **Ավստրիայում և Մալթայում:**

Ապաստան հայցողների համար մուտքի արգելքներից և սահմանների փակումից հստակ ազատում է նախատեսված Եվրոպայի ավելի քան 20 երկրներում: Տարածաշրջանային մակարդակում միջազգային պաշտպանություն հայցող անձանց համար մուտքի սահմանափակումներից ազատումը ներառված է նաև ԵՄ հանձնաժողովի 2020 թվականի մարտի 16-ի որոշմամբ սահմանված ճանապարհորդական սահմանափակումներում⁵:

3. Հիմնական հաշվառման և փաստաթղթավորման ապահովումը

ԱՀԿ-ն խորհուրդ է տալիս COVID-19-ի դեմ պայքարել հասարակական հեռավորության և հիգիենայի կանոնների ուժեղացված պահպանման միջոցով: Չնայած ԱՀԿ-ի կողմից, որպես այդպիսին, առաջարկություն չի եղել, բազմաթիվ պետություններ կիրառում են նաև գործունեության որոշակի տեսակների սահմանափակումներ: Քանի որ այս միջոցառումներն ազդում են բազմաթիվ պետական ծառայությունների գործունեության վրա, ապաստան հայցողների, փախստականների կամ քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման և փաստաթղթավորման եղանակները, որոնք կարևոր նշանակություն ունեն նրանց օրինական կացությունը սահմանելու կամ երկարաձգելու և ծառայություններից օգտվելու համար, կարող են փոփոխվել համակարգերի արդյունավետությունը պահպանելու և ապաստանի և ապաքաղաքացիության որոշման ընթացակարգերում ուշացումներից ու կուտակումներից խուսափելու համար (տես նաև Բաժին 5):

- Ինչպես պետական մարմինների աշխատողներին, այնպես էլ ապաստան հայցողներին սպառնացող վտանգները նվազեցնելու համար **հաշվառման գործընթացը կարող է պարզեցվել, և կարելի է միայն գրանցել էական տվյալները ու պարզել հատուկ կարիքները:** Հաշվառման կատարումն ավելի պարզեցնելու և ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով սա կարող է արվել անմիջապես ժամանելուն պես կամ ինքնության որոշման ժամանակ՝ բժշկական սքրինինգի հետ միասին:
- **Դեմ առ դեմ հաշվառման ժամանակ հիգիենայի պահպանման ուժեղացված միջոցները կարող են ներառել լրացուցիչ պաշտպանական սարքավորումներ, կանոնավոր ախտահանում և հարմարեցված շենքային պայմաններ և հավելումներ** (ինչպես օրինակ՝ պլեքսիգլասից պաշտպանիչ վահանակներ)՝ վարակի փոխանցումը կանխելու նպատակով: Մարդիկ

⁵ ԵՆ, Որոշում դեպի ԵՄ կատարվող ոչ կարևոր ուղևորությունների նկատմամբ ժամանակավոր սահմանափակումներ կիրառելու վերաբերյալ, 16 մարտի 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://ec.europa.eu/transparency/regdoc/rep/1/2020/EN/COM-2020-115-F1-EN-MAIN-PART-1.PDF>:

պետք է ներս մտնեն հերթով, պետք է առանձնացվեն սպասասենյակներ ֆիզիկական հեռավորության պահպանումը հեշտացնելու նպատակով, պետք է ապահովվի ձեռքերը լվանալու հարմարությունների և ախտահանիչ նյութերի առկայությունը:

- **Չնայած ոչ բոլոր հանգամանքներում է հարմար, հաշվառման դիմումների գրավոր կամ էլեկտրոնային ներկայացումը** գործնական լուծում է այնպիսի իրավիճակներում, երբ ազգային առողջապահական ուղեցույցները արգելում են որևէ տեսակի շփում: Անհրաժեշտության դեպքում նման հայցերի ընդունումը և դրանց ընթացքը կարող է իրականացվել հեռավար միջոցներով (տեսա- կամ հեռակոնֆերանսի միջոցով) դիմողի ինքնությունը հաստատելու և հայցի հետ կապված ցանկացած հարց ճշտելու նպատակով: Մինչդեռ ինքնության ճանաչման իրականացումը դժվար է դիմումի հեռավար քննության ընթացքում, տեսակոնֆերանսի ընթացքում կարող է կատարվել դեմքով ճանաչում, այդ թվում՝ ինքնությունը հաստատող փաստաթղթերի (համապատասխան մարմիններին էլեկտրոնային ձևով ներկայացված) հետ համեմատության միջոցով, երբ առկա են նման փաստաթղթեր: Տեսակոնֆերանսի միջոցով կարելի է նաև ստանալ անձի նկարը անհատական գործում զետեղման և հետագա գործածման համար: Դրանով պայմանավորված՝ պետք է կիրառվեն տվյալների պաշտպանության նկատառումները:
- **Դիմողին հաշվառման դիմում ներկայացնելու հարցում աջակցություն տրամադրելը՝ հեռախոսով, առցանց կամ մշակութային միջնորդների միջոցով**, կնպաստի դիմումների որակի ապահովմանը և կհեշտացնի դրանց ժամանակին քննությունը: Իրավաբանական աջակցություն տրամադրող գործընկերները նույնպես կարող են օգնել՝ աջակցելով դիմողին պետական մարմիններին ուղղված գրավոր դիմումների կազմման հարցում՝ այդպիսով ֆորմալ կերպով արձանագրելով հաշվառվելու և ապաստանի համար դիմելու անձի մտադրությունը:
- **Փաստաթղթերի տրամադրումը և/կամ վավերականության երկարաձգումը կարող է ամբողջությամբ ավտոմատացվել**, օրինակ՝ էլեկտրոնային փոստի, առցանց ծառայությունների միջոցով՝ առանձին դեպքերում կամ որպես արտակարգ իրավիճակով պայմանավորված գործարկված համընդհանուր միջոց: Նման փաստաթղթերը, այդ թվում՝ հաշվառման մասին վկայող տեղեկանքները, պետք է ապահովեն օրինական կացություն և ծառայությունների, այդ թվում՝ առողջապահական ծառայությունների հասանելիություն: Սա նաև կարևոր է հանրային առողջապահության տեսանկյունից, քանի որ հեշտացում է ապաստան հայցողների, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց ներառումը ընթացիկ իրավիճակին ուղղված ազգային արձագանքում: Բացի այդ, ապաքաղաքացիության ռիսկերը կանխարգելելու նպատակով հարկավոր է շարունակել ծննդյան վկայականների հատկացումը: Այն դեպքերում, երբ

Ոչ պաշտոնական թարգմանություն

նման ծառայությունները ժամանակավոր կասեցվում են նորածինների համար, բուժհաստատության կողմից տրված տեղեկանքը ծննդի մասին պետք է համարվի ինքնության և օրինական կացության բավարար ապացույց, մինչև քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները կվերսկսեն իրենց ծառայությունների մատուցումը:

Պետական պրակտիկայի օրինակներ

Մի շարք պետություններ շարունակում են ապաստան հայցողների նախահաշվառումը և հաշվառումը, այդ թվում՝ **Ավստրիան, Վրաստանը, Գերմանիան, Իսլանդիան, Իռլանդիան, Իտալիան, Լիխտենշտեյնը, Մոլդովան, Սլովակիան, Սլովենիան և Շվեյցարիան:**

Բացի այդ, բազմաթիվ պետություններ շարունակում են փաստաթղթերի տրամադրումը օրինական կացության և ծառայությունների հասանելիության ապահովման նպատակով: Նշված նպատակներով **Բոսնիա և Հերցեգովինայում**, օրինակ, «ապաստան հայցելու մտադրության» վկայականներ, իսկ **Գերմանիայում** ժամանակավոր բնակության թույլտվություններ են շարունակում տրամադրվել նոր ժամանած անձանց:

Պորտուգալիայում անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու կամ թարմացնելու հետ կապված դժվարությունների համատեքստում կառավարությունը որոշել է մինչև առնվազն 2020 թվականի հունիսի 30-ը երկարաձգել բոլոր փաստաթղթերի, այդ թվում՝ ապաստանի կարգավիճակին առնչվող փաստաթղթերի և բնակության թույլտվությունների վավերականությունը, որոնց ժամկետը լրացել է 2020 թվականի փետրվարի 24-ից հետո: Նույն կերպ **Իռլանդիայում** այն թույլտվությունները, որոնց վավերականության ժամկետը լրանալու է նախքան մայիսի 20-ը, ինքնաբերաբար թարմացվելու են երկու ամիս ժամկետով նույն պայմաններով: **Իտալիայում** կացության թույլտվությունները, որոնց վավերականության ժամկետը լրացել է հունվարի 31-ից ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում, վավերական են համարվում մինչև 2020 թվականի հունիսի 15-ը: **Լեհաստանը** նույնպես բացառիկ միջոցներ է ձեռնարկել՝ երկարաձգելու այն բնակության թույլտվությունների վավերականությունը, որոնց ժամկետը լրանում էր:

Այլ պետություններում, ինչպես օրինակ՝ **Մալթայում** և **Ադրբեջանում**, կիրառվել են նորարարական մոտեցումներ ապաստան հայցողներին առցանց ապաստանի հայցեր, բողոքներ և/կամ փաստաթղթեր տրամադրելու (ինչպես նաև դրանց ժամկետը երկարաձգելու) դիմումներ ներկայացնելու հնարավորություն ընձեռելու ուղղությամբ: Ապաքաղաքացիության որոշման դիմումների նկատմամբ էլ են նմանատիպ մոտեցումներ կիրառվել, ինչպես օրինակ՝ **Միացյալ Թագավորությունում:**

Գերմանիայում Միգրացիայի և փախստականների դաշնային գրասենյակը փոխել է անձամբ դիմումներ ներկայացնելու իր քաղաքականությունը, որպեսզի բավարարի

շփումից խուսափելու պահանջը, և ներկայումս միայն գրավոր դիմումներ է ընդունում: Նույն կերպ **Իտալիայում** ապաքաղաքացիության դիմումները կարող են ներկայացվել փոստի միջոցով:

Թուրքիայում բացառության կարգով շարունակվում է հատուկ կարիքներ ունեցող և քրոնիկ հիվանդություններից տառապող անձանց հաշվառումը, մինչդեռ այլ դեպքերում ընթացակարգերը ժամանակավոր դադարեցված են:

4. Վարակի փոխանցման կանխարգելումը ընդունելության և կալանքի համատեքստում

Հավաքական կենտրոնները, ինչպես օրինակ՝ ընդունելության և տարանցիկ կենտրոնները, առանձնահատուկ մարտահրավեր են COVID-19-ի տարածումը կանխարգելելու համար անհրաժեշտ ֆիզիկական հեռավորության և հիգիենայի կանոնների պահպանման առումով: Սա մտահոգիչ է ոչ միայն նման կենտրոնների բնակիչների, այլև պետական մարմինների համար՝ վիրուսի փոխանցումից բնակչության մեծ մասին պաշտպանելու նրանց ջանքերին խոչընդոտելու առումով: Այս համատեքստում ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է հաշվի առնել հետևյալ միջոցների կիրառումը⁶.

- **Հնարավորության դեպքում, անցում կատարել առանձին մասնավոր կացարանների կամ ավելի փոքր հավաքական կենտրոնների,** հատկապես՝ տարեցների և մինչ այդ գոյություն ունեցող հիվանդություններով անձանց դեպքում, ում համար COVID-19-ը առանձնապես բարձր ռիսկ է պարունակում⁷:
- **Փոփոխություններ կատարել գոյություն ունեցող կենտրոններում՝ վարակի փոխանցման վտանգը կրճատելու նպատակով,** օրինակ՝ ծանրաբեռնվածության թեթևացում, լրացուցիչ տարածքի կամ համալրումների տրամադրում (ինչպես օրինակ՝ պլեքսիգլասից վահանակներ), կանոնավոր մաքրում և ախտահանում

⁶ ՄՄՀ միջանկյալ ուղղորդումը COVID-19 համավարակի բռնկմանը պատրաստվածությունը և արձագանքման գործողությունները մարդասիրական արձագանքման իրավիճակներում ընդլայնելու վերաբերյալ՝ ներառելով ճամբարները և ճամբարանման միջավայրերը, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://interagencystandingcommittee.org/other/interim-guidance-scaling-covid-19-outbreak-readiness-and-response-operations-camps-and-camp> :

⁷ COVID-19-ի ծանր դեպքերի հայտնի ռիսկի գործոնները՝ 60-ից բարձր տարիք, գերճնշում, դիաբետ, սրտանոթային հիվանդություն, քրոնիկ շնչառական հիվանդություն, իմունաճնշիչ պայմաններ (տես ԱՀԿ, Գործառնական նկատառումներ առողջապահական հաստատություններում և համայնքներում COVID-19-ի դեպքերի կառավարման վերաբերյալ, Միջանկյալ ուղղորդում 19 մարտի 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.who.int/publications-detail/operational-considerations-for-case-management-of-covid-19-in-health-facility-and-community>) :

և ուժեղացված ջրամատակարարում, սանիտարահիգիենիկ միջոցառումներ (այդ թվում՝ ձեռքերը լվանալու հարմարություններ և ախտահանիչ միջոցներ բոլոր սենյակներում):

- **Նոր ժամանած անձանց դեպքում պետք է դիտարկել անհատական բժշկական սրբինինգ իրականացնելու հնարավորությունը**, որի նպատակն է որոշել այն անձանց, ում հարկավոր է շտապ ուղղորդել դեպի բուժհաստատություններ, կարանտինի ենթարկել կամ ում նկատմամբ հարկ է մեկուսացման միջոցներ կիրառել:
- **Առանձին շենք կամ հատված հատկացնել այն անձանց, որոնց մոտ հաստատվել է կորոնավիրուս, կամ որոնք կասկածվում են կորոնավիրուսով վարակված լինելու մեջ**, որպեսզի հնարավոր լինի կանխարգելել վարակի փոխանցումը կենտրոնի ներսում և կենտրոնից դուրս:
- **Կենտրոնում ծառայությունների և աջակցության տրամադրման եղանակները** կարող են փոփոխվել այնպես, որ թույլ չտրվի մարդկանց կուտակումներ կամ հավաքներ, և կարելի է սահմանել հերթեր և սպասասենյակներ անհրաժեշտ ֆիզիկական հեռավորության պահպանումը ապահովելու և անհարկի շփումից խուսափելու համար:
- **Համաճարակաբանական հետազոտությունը** (կասկածելի և հաստատված դեպքերի մշտադիտարկում՝ ԱՀԿ դեպքերի սահմանումներին համապատասխան)⁸, **կոնկրետ դեպքերի ուսումնասիրությունը**⁹, **ուղղորդումները և նման դեպքերի մասին ԱՀԿ-ին զեկուցելը** (48 ժամվա ընթացքում)¹⁰ կարող են հեշտացնել COVID-19-ի հնարավոր դեպքերի հետ տարվող համապատասխան աշխատանքները՝ ԱՀԿ-ի և ազգային առողջապահական մարմինների ցուցումներին համապատասխան¹¹: Ազգային վարքականոններին հարկավոր է հետևել նաև ընդունելության կենտրոններում,

⁸ ԱՀԿ, Մարդու կողմից փոխանցված կորոնավիրուսի պատճառով առաջացած COVID-19 համավարակի համաշխարհային վերահսկողություն, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://apps.who.int/iris/handle/10665/331506> :

⁹ ԱՀԿ, COVID-19-ի դեպքերի և վարակման օջախների ուսումնասիրությանն առնչվող նկատառումներ, Միջանկյալ ուղղորդումներ, 13 մարտի 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/technical-guidance/early-investigations>:

¹⁰ ԱՀԿ, COVID-19-ի հաստատված դեպքերի և դրանց ելքերի մասին զեկուցման փոփոխված ձևը, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331234/WHO-2019-nCoV-SurveillanceCRF-2020-2-eng.pdf>:

¹¹ ԱՀԿ տեխնիկական ուղղորդում, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/technical-guidance> :

ինչը հաճախ պահանջում է համակարգում և համագործակցություն ընդունելության և առողջապահական մարմինների միջև:

- **Հոգեկան և հոգեբանասոցիալական առողջապահական նկատառումները և հատուկ կարիքներ ունեցող անձանց խմբերին ուշադրության հատկացումը** խիստ կարևոր են ֆիզիկական հեռավորության պահպանման պայմաններում, հատկապես՝ երբ կիրառվում են տեղաշարժի սահմանափակումներ կամ մեկուսացում, այդ թվում՝ ընդունելության կենտրոնների շենքերում: Մրա արդյունքում կարող է առաջ գալ, օրինակ, ավելի շատ առցանց կամ հեռախոսով աշխատելու անհրաժեշտություն, և հարկավոր լինի հաշվի առնել հատուկ կարիքները, որ այս իրավիճակում կարող են ունենալ տարեցները, երեխաները և մինչ այդ գոյություն ունեցող առողջական խնդիրներով անձինք¹²:
- **Հարկավոր է ուշադրություն դարձնել ապաստան հայցողներին, փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք անտուն են կամ գտնվում են ոչ ֆորմալ բնակավայրերում**, որտեղ վարակի փոխանցումից պաշտպանող կարևոր երաշխիքներ, ինչպես օրինակ՝ տանը մնալն է կամ ֆիզիկական հեռավորության պահպանումը, գրեթե անհնար է ապահովել, և սանիտարահիգիենիկ պայմանները հաճախ անմխիթար են: Վնասի հնարավոր մեղմացման միջոցառումները, որոնց իրականացման մասին կարելի է մտածել, ներառում են ժամանակավոր կացարանի տրամադրումը, օրինակ՝ հանրակացարանների շահագործման կամ ընդունելության կենտրոնների լրացուցիչ հնարավորություններն օգտագործելու միջոցով:

Պետական պրակտիկայի օրինակներ

Իտալիայում Ներքին գործերի նախարարությունը մի շարք ընդհանուր հրահանգներ է սահմանել, որոնց նպատակն է ընդունելության կենտրոններում ապահովել վարակի փոխանցման կանխարգելման միջոցառումների իրականացումը, ինչպես օրինակ՝ ֆիզիկական հեռավորության պահպանումը կամ մարդկանց տեղափոխումը գերբնակեցված կենտրոններից: Նախարարությունը նաև ընդունելության

¹² ԱՀԿ, Հոգեկան առողջության և հոգեոսոցիալական նկատառումները COVID-19 համավարակի բռնկման ընթացքում, 18 մարտի 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.who.int/publications-detail/mental-health-and-psychosocial-considerations-during-the-covid-19-outbreak>: COVID-19-ի համատեքստում հոգեկան առողջության և հոգեոսոցիալական նկատառումների վերաբերյալ լրացուցիչ ուղղորդում կարելի է գտնել հետևյալ հղմամբ՝ <http://www.emro.who.int/mnh/publications/mental-health-support-during-covid-19.html>; Մարդասիրական գործողություններում երեխաների պաշտպանության դաշինք, Տեխնիկական ծանոթագրություն. Երեխաների պաշտպանությունը COVID-19 համավարակի ընթացքում, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://alliancecpha.org/en/COVID19>; «ՀելփԷյջ» հկ, COVID-19՝ ուղղորդում և խորհուրդներ տարեցների համար, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.helpage.org/what-we-do/covid19-guidance-and-advice-for-older-people/>; ՄԱԿ ՓԳՀ, Տարիքի, գենդերի և բազմազանության հետ կապված նկատառումներ – COVID-19, 21 մարտի 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5e84a9dd4.html> :

Ոչ պաշտոնական թարգմանություն

միջոցառումները երկարաձգել է այն ապաստան հայցողների համար, որոնք այլևս իրավասու չէին լինելու դրանցից օգտվելու:

Բուլղարիայում ապաստան հայցողները, որոնք բնակվում են ընդունելության կենտրոններից դուրս, և որոնք ներկա իրավիճակի հետևանքով կորցրել են իրենց աշխատանքը, կարող են ժամանակավորապես բնակվել ընդունելության կենտրոններում՝ ներկայացնելով գրավոր դիմում և ենթարկվելով 14-օրյա կարանտինի:

Բելգիայում ընդունելության համակարգի վրա COVID-19-ի ազդեցության դեմ պայքարելու նպատակով սահմանվել է արձագանքման ծրագիր: Խոցելի բնակիչներին ավելի լավ պաշտպանելու նպատակով որոշվել է նրանց տեղափոխել անհատական կացարաններ, այլ շենքեր կամ խմբավորել նրանց առանձին միջանցքներում: Ընտանիքներին տեղափոխում են միասին, որպեսզի չխախտեն ընտանիքի միասնականությունը և ապահովեն ռիսկային խմբում գտնվող անձին տրամադրվող աջակցությունը: Նոր ժամանած անձինք նաև ստուգվում են հատուկ COVID-19-ի համար նախատեսված հարցաշարի միջոցով և մարմնի ջերմաստիճանը չափելով:

Իռլանդիայում նույնականացվում են տարեցները և առողջական խնդիրներ ունեցող անձինք, որպեսզի նրանց նկատմամբ հետագայում կիրառվեն մեկուսացման միջոցներ: Մեկուսացման համար նախատեսված առանձին վայր է սահմանվում այն բնակիչների համար, որոնք վարակված են COVID-19-ով, կամ որոնց մոտ կասկածվում է COVID-19-ի առկայություն:

Լատվիայում տարեցները և առկա առողջական խնդիրներով բնակիչները տեղափոխվել են ավելի մեկուսացված սենյակներ, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ հարմարությունները:

Գերմանիայում առանձնապես խոցելի անձինք բնակեցվում են առանձին վայրերում, որտեղ առկա է ուժեղացված բժշկական օգնություն: Այս վայրեր տեղափոխությունը կատարվելու է միայն 14-օրյա կարանտինի ավարտից հետո:

Նորվեգիայում բնակիչները անհրաժեշտության դեպքում կարանտինի են ենթարկվում իրենց սենյակներում: Նախնական ընդունելության կենտրոնը ներառում է հատուկ առանձնացված տարածք առողջապահական ծառայությունների համար և առանձին բաժին այն անձանց համար, որոնք վարակված են COVID-19-ով, կամ որոնց մոտ կասկածվում է COVID-19-ի առկայություն: Այլ ընդունելության կենտրոններում ուժեղացվել են պատրաստվածության միջոցառումները, այդ թվում՝ ապահովվել են լրացուցիչ բնակելի տարածքներ:

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ավստրիայում բոլոր նոր ապաստան հայցողները ենթարկվում են բուժօգնության: Նրանց մոտ կատարվում է մարմնի ջերմաստիճանի չափում առաջին փուլի ընդունելության կենտրոններ մուտք գործելիս և այնտեղից դուրս գալիս: Բարձր ջերմաստիճանի դեպքում անձը անմիջապես տեղափոխվում է մեկուսացված տարածք, որն առկա է յուրաքանչյուր շենքում, որտեղ հետագա գնումներ են իրականացվում բուժանձնակազմի կողմից: Այն անձինք, ում մոտ հաստատվում է հիվանդության առկայությունը, ենթարկվում են կարանտինի հատուկ սահմանված սենյակներում: Անհրաժեշտության դեպքում նրանք տեղափոխվում են տեղական հիվանդանոցներ: Սահմանվել են մշտադիտարկման մեխանիզմներ հնարավոր կասկածելի դեպքերի գնահատման համար: Տարեցները և բարձր ռիսկի գոտում գտնվող այլ անձինք առանձնացվում են հնարավորության դեպքում: Նոր դաշնային ընդունելության կենտրոններ են բացվել հավաքական կենտրոնների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, ինչպես նաև այլընտրանքներ ունենալու նպատակով, եթե COVID-19-ով վարակվածների պատճառով այլ ընդունելության կենտրոններ ևս ենթարկվեն կարանտինի:

Շվեդիայում որոշ հավաքական կենտրոններում կրճատվել է մարդկանց թիվը (գրադեցվածության մակարդակը) ծանրաբեռնվածության թեթևացման և հիվանդության տարածման ռիսկերը նվազեցնելու նպատակով: **Դանիայում** բնակիչները հերթով են ճաշում, որպեսզի մեծացնեն ֆիզիկական հեռավորությունը:

Խորվաթիայում չափում են ընդունելության կենտրոնների բնակիչների մարմնի ջերմաստիճանը ճաշի գնալիս, մինչդեռ հատակին արված գծանշումները ապահովում են ֆիզիկական հեռավորության պահպանումը հանրային տարածքներում:

Իսպանիայում միգրացիայի հարցերով պետքարտուղարը ուղեցույց է սահմանել ընդունելության ազգային համակարգի կառավարումը COVID-19-ին համապատասխան փոփոխելու վերաբերյալ: Ուղեցույցի նպատակն է ապահովել ընդունելության համակարգի նորմալ գործունեությունը և պահպանել անձնակազմի ու բնակիչների առողջությունը:

Սերբիայում բուժանձնակազմի ներկայությունը ուժեղացվել է բոլոր կենտրոններում, որոնք որպես կացարան են ծառայում ապաստան հայցողների և միգրանտների համար: Սահմանվել է հատուկ ուղեցույց այն մասին, թե ինչպես պաշտպանվել COVID-19-ից, սքրինինգ և թեստավորում անել, ինչպես նաև կարանտինի ենթարկել նոր բնակիչներին և մեկուսացնել համապատասխան ախտանշաններ ունեցողներին:

Թուրքիայում, համավարակի վաղ փուլերից սկսած, իրականացվում է ժամանակավոր բնակության կենտրոնների ախտահանում, և պահանջվում է, որ անձնակազմը կրի դիմակներ և ձեռնոցներ: Բացի այդ, հիգիենայի պարագաներ և անձնական պաշտպանիչ նյութեր են բաժանվել այդ կենտրոնների բնակիչներին, և

վերակազմակերպվել են հանրային օգտագործման տարածքները ֆիզիկական հեռավորության պահպանումն ապահովելու համար: Հեռացման կենտրոններում կանոնավոր ախտահանումն ուժեղացվել է, և ստեղծվել են նախաընդունելության տարածքներ՝ նոր ընդունված օտարերկրացիների 14-օրյա կարանտինը հնարավոր դարձնելու նպատակով: Իրականացվում են ընդունելությանը նախորդող բուժզննումներ և հաջորդող կանոնավոր ստուգումներ առողջապահության նահանգային տնօրինությունների բժիշկների կողմից:

ԱՀԿ-ի¹³, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԻՄԿ)¹⁴, Եվրոպայի խորհրդի (ԵԽ)¹⁵ և Միջգերատեսչական մշտական հանձնաժողովի (ՄՄՀ)¹⁶ փորձագիտական կարծիքում ընդգծվում է, որ կալանքի մեջ գտնվող անձինք, այդ թվում՝ ապաստան հայցողները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք գտնվում են ներգաղթային կալանքում կամ այլ փակ վայրերում, COVID-19-ով վարակվելու առանձնահատուկ վտանգի տակ են գտնվում: Այս փորձագիտական կարծիքի և պետական պրակտիկայի հիման վրա առանձնացվել են հետևյալ հիմնական նկատառումները, որոնք հիմնավորում են ներկա հանգամանքներում կալանքի այլընտրանքների կիրառման և կալանքի դադարեցման անհրաժեշտությունը.

- **Ռիսկերի աճը փակ տարածքներում:** Հաշվի առնելով այն, որ կալանքի վայրերի տարածքը փակ և հաճախ գերբնակեցված է, ԱՀԿ-ի կողմից առաջարկվող և համավարակից տուժած եվրոպական պետություններում համատարած կերպով պահպանվող անհրաժեշտ կանխարգելիչ միջոցների կիրառումը, այդ թվում՝ ֆիզիկական հեռավորության և հիգիենայի կանոնների պահպանումը, շատ դժվար է: Սա առանձնապես դժվար է այն դեպքերում, երբ ջրի և

¹³ ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ, COVID-19-ին պատասխանելու պատրաստվածությունը, դրա կանխարգելումը և վերահսկումը բանտերում և կալանքի այլ վայրերում, Միջանկյալ ուղղորդում, 15 մարտի 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.euro.who.int/__data/assets/pdf_file/0019/434026/Preparedness-prevention-and-control-of-COVID-19-in-prisons.pdf?ua=1:

¹⁴ ԿԻՄԿ, COVID-19. բանտերում բնակվող անձանց պաշտպանությունը վարակիչ կորոնավիրուսից, 11 մարտի 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.icrc.org/en/document/protecting-prison-populations-infectious-disease>:

¹⁵ Եվրոպայի խորհուրդ, Խոշտանգումների կանխարգելման կոմիտե (ԽԿԿ), Ազատությունից զրկված անձանց հանդեպ վերաբերմունքի սկզբունքներ, 20 մարտի 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.coe.int/en/web/cpt/-/covid-19-council-of-europe-anti-torture-committee-issues-statement-of-principles-relating-to-the-treatment-of-persons-deprived-of-their-liberty->:

¹⁶ ՄՄՀ Միջանկյալ ուղղորդում COVID-19-ի վերաբերյալ. ուշադրության կենտրոնում ազատությունից զրկված անձինք են, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://interagencystandingcommittee.org/system/files/2020-03/IASC%20Interim%20Guidance%20on%20COVID-19%20%20Focus%20on%20Persons%20Deprived%20of%20Their%20Liberty.pdf> :

սանիտարահիգիենիկ պայմանների հասանելիությունը արդեն սահմանափակվել է, և երբ նախապես առկա են եղել անբավարար հիգիենայի պայմաններ: Ուստի նման փակ տարածքներում COVID-19-ի տարածման հավանականությունը ավելի բարձր է, ինչը վտանգի տակ է դնում այս հաստատություններում պահվող անձանց, ինչպես նաև աշխատող անձնակազմի առողջությունը և, հնարավոր է, նաև կյանքը:

- **Նախադրյալներով պայմանավորված՝ ավելի մեծ ռիսկերը կալանավորված անձանց համար:** Բացի այդ, բնտնում գտնվող անձինք սովորաբար ավելի խոցելի են հիվանդության առջև և ավելի վատ առողջական վիճակում են գտնվում, քան ընդհանուր բնակչությունը, և հաճախ ավելի մեծ ռիսկերի են ենթակա, ինչպես օրինակ՝ վատ հիգիենիկ պայմանները և օրգանիզմի թույլ դիմադրողականությունը: Այս նկատառումները կարող են կիրառելի լինել նաև կալանքի վայրերում գտնվող ապաստան հայցողների նկատմամբ, հատկապես՝ երբ կալանքի նման պայմանները երկարաձգվում են և հաջորդում ուղևորությունից առաջ և դրա ընթացքում նրանց հետ տեղի ունեցած հնարավոր տրավմատիկ դեպքերին:
- **Ընդարձակման (ամպլիֆիկացիայի) վտանգը:** Կալանքի վայրերը ամբողջությամբ մեկուսացված չեն հասարակությունից, երբ հերթը հասնում է այնպիսի խիստ վարակիչ հիվանդության, ինչպիսին է COVID-19-ն է: Նույնիսկ մուտքի ուժեղացված սահմանափակումների և մուտք գործելիս բժշկական սքրինինգի դեպքում էլ առկա է կալանքի վայրերի անձնակազմի և նոր ժամանած անձանց մշտական հոսք, որի արդյունքում կանոնավոր շփում է տեղի ունենում հասարակության հետ: Ուստի ոչ միայն դժվար է կանխել վիրուսի մուտքը կալանքի վայրեր, այլև դրա տարածումը նման վայրերի ներսում կարող է շրջակայքում բնակվող համայնքի և ընդհանրապես ողջ բնակչության շրջանում վիրուսի դեպքերի ավելացման և տարածման վտանգ պարունակել:

Այն դեպքերում, երբ ներգաղթային կալանքը այլևս օրինական կամ տեղին չէ առկա հանգամանքների պայմաններում (Դուբլինի տրանսֆերների կասեցումը, սահմանների փակ լինելու պատճառով ծագման երկիր վերադարձի անհնարիությունը), խնդրո առարկա անձանց պետք է տրամադրվի **ընդունելության պատշաճ և ապահով այլընտրանք**: Սա պահանջում է վերստին հանձն առնել ընդունելության հնարավորությունների ընդլայնումը՝ նաև որպես COVID-19-ի տարածումը կանխելու միջոց:

Մինչդեռ վարակի փոխանցման ռիսկերով պայմանավորված՝ կալանքի վայրեր մուտքի սահմանափակումները համարվում են տեղին և խելամիտ, հարկավոր է աջակցել լիազորված մարմինների, այդ թվում՝ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից մշտադիտարկման գործողությունների իրականացմանը, օրինակ՝ պարտադիր բժշկական սքրինինգի և առողջական վիճակի մասին տեղեկանքների մասին պահանջների միջոցով:

Պետական պրակտիկայի օրինակներ

Եվրոպայում ծավալվող COVID-19-ի իրավիճակով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով կալանքի վայրերում գտնվող անձանց, այդ թվում՝ ապաստան հայցողների համար այս իրավիճակի բարձր ռիսկերը՝ մի շարք եվրոպական երկրներ սկսել են կալանքից ազատել ապաստան հայցողներին և չընդունել հավելյալ անձանց, այդ թվում՝ նոր ժամանածներին: Այդ երկրների թվում են, օրինակ, **Ավստրիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Իսպանիան, Շվեյցարիան և Միացյալ Թագավորությունը**: Միաժամանակ հաղորդվում է, որ մի շարք այլ պետություններ էլ արդեն դիտարկում են նման միջոցների դիմելու հարցը:

Միացյալ Թագավորությունում հատուկ ուղեցույց է հրապարակվել բանտերում և կալանքի այլ սահմանված վայրերում COVID-19-ի ռիսկերի և դրանց մեղմացման միջոցառումների մասին¹⁷: Այս ուղեցույցը օգնում է առողջապահական հաստատությունների, ազատագրկման և կալանքի վայրերի աշխատակիցներին այնպես անելու, որ վիրուսի փոխանցման կանխարգելման պահանջները կիրառվեն կալանքի վայրերում: Այն նաև չի արգելում օրինական ներկայացուցիչների և լիազորված գործակալությունների այցելությունները կալանքի վայրեր: Կալանքի վայրերում վիրուսի փոխանցման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումն ապահովող նմանատիպ աշխատանքներ են ձեռնարկվել նաև Իտալիայում:

5. Ապաստանի ընթացակարգերը և կուտակումների կառավարումը

COVID-19-ով պայմանավորված իրավիճակի արդյունքում ապաստանի և ապաքաղաքացիության որոշման գործընթացները կասեցվել են բազմաթիվ ԵՄ և այլ եվրոպական երկրներում: Միաժամանակ ապաստանի հարցերով զբաղվող ազգային մարմինները մտահոգություններ են հայտնել այդ գործընթացների հետ կապված աշխատանքների հետաձգման և կուտակումների վերաբերյալ և որոշ դեպքերում իրականացնում են ապաստանի ընթացակարգերը, որպեսզի կանխեն կուտակումները, նույնիսկ չնայած այն բանին, որ COVID-19-ի փոխանցման կանխմանն ուղղված ոչ բոլոր պարտադիր երաշխիքներն է հնարավոր լինում ապահովել բոլոր ներգրավված կողմերի համար, և/կամ կարևոր ընթացակարգային երաշխիքներ կարող են տուժել ընդհանուր իրավիճակի պատճառով: Ուստի, ձգձգումների և կուտակումների կառավարումը հրատապ կարիք է տիրող

¹⁷ Միացյալ Թագավորության կառավարություն, Ուղղորդում - COVID-19. Ուղղորդում բանտերի և կալանքի այլ սահմանված վայրերի մասին, թարմացված 26 մարտի 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.gov.uk/government/publications/covid-19-prisons-and-other-prescribed-places-of-detention-guidance/covid-19-prisons-and-other-prescribed-places-of-detention-guidance> :

Ոչ պաշտոնական թարգմանություն

իրավիճակում, ինչպես նաև միջնաժամկետ հեռանկարում, երբ կասեցված ընթացակարգերը վերսկսվեն:

Այս հարցում սեփական գործառնական փորձից ելնելով, ինչպես նաև ուսումնասիրելով ներկա հանգամանքներում որդեգրված պետական պրակտիկան՝ ՄԱԿ ՓԳՀ-ն ներկայացնում է հետևյալ հիմնական նկատառումները և առաջարկությունները այս բացառիկ իրավիճակում ձգձգումների և կուտակումների կառավարման վերաբերյալ.

Սցենար 1. Ապաստանի ընթացակարգերի շարունակումը որպես կուտակումների կառավարման միջոց

Ընդհանուր առմամբ, ինչպես նաև հնարավորության դեպքում, հաշվի առնելով վարակի փոխանցման կանխարգելման կիրառելի պահանջներն ու անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքները, խելամիտ է շարունակել ապաստանի ընթացակարգերը՝ կուտակումները կանխելու համար: Մի քանի պետություններ որոշ փոփոխություններ են կատարել ինչպես COVID-19-ի փոխանցումը ազգային պահանջներին համապատասխան կանխելու (Ա), այնպես էլ ի հեճուկս առաջացած հանգամանքներին ընթացակարգային երաշխիքների պահպանումն ապահովելու նպատակով (Բ):

Ա. Հարմարեցումներ՝ ուղղված COVID-19-ի փոխանցումը կանխելուն

- **Ֆիզիկական հարմարեցումների** համար կարող են պահանջվել լրացուցիչ սարքավորումներ, շինություններ կամ համալրումներ: Մի քանի պետություններ դիմել են լրացուցիչ կամ այլընտրանքային շինությունների շահագործմանը, որոնք ունեն բավարար տարածք, համապատասխանում են հիգիենայի բարձր չափանիշների, կամ տեղադրել են պլեքսիգլասից պաշտպանիչ վահանակներ այն վայրերում, որտեղ տեղի է ունենում դեմ առ դեմ շփում:
- Նման շենքեր մուտք գործող բոլոր անձինք ենթարկվում են **բժշկական սրբինիզների**: Բացի այդ, տրամադրվում է տեղեկատվություն վարակի փոխանցման կանխարգելման պահանջների մասին:
- Մի շարք եվրոպական երկրներում կիրառվում են **հարցազրույցի հեռավար միջոցներ**՝ որպես դեմ առ դեմ հարցազրույցի այլընտրանքներ, գոնե մասամբ, այդ թվում՝ տեսա- կամ հեռակոնֆերանսներ: Մա հատկապես խորհուրդ է տրվում այն դեպքերում, երբ հարցազրույցի նման միջոցներ արդեն սահմանված են եղել նախքան ընթացիկ իրավիճակը, միևնույն ժամանակ ընդունելով, որ դրանք ոչ միշտ են հարմար լինելու ապաստանի բոլոր դիմումների համար, օրինակ՝ երբ հատուկ կարիքները կամ գործնական իրավիճակները դա թույլ չեն տալիս: Նման հեռավար միջոցների անցնելիս

հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել հարցազրույցի տեխնիկայի և արդյունքների որակը պահպանելուն, այդ թվում՝ գործերը քննող համապատասխան աշխատակիցներին վերապատրաստելու միջոցով: Հեռավար հարցազրույցի ընթացքը հեշտացնելու նպատակով խորհուրդ է տրվում ունենալ խնդիրները բացահայտելու և լուծելու համար պատասխանատու, որը կհեշտացնի գործի ընթացքը: Տեխնոլոգիաների մեջ ներդրումներ կատարելը կարող է օգտակար լինել նաև երկարաժամկետ հեռանկարում այն դեպքերում, երբ նման միջոցների կիրառությունը կարող է լրացուցիչ նպաստել ապաստանի ազգային համակարգի գործունակությանը և արդյունավետությանը: Հարցազրույցի հեռավար միջոցներ կիրառելիս հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել **տվյալների պաշտպանության նկատառումներին**: Դրանք ներառում են այնպիսի հարթակների և գործիքների ընտրությունը, որոնք լավագույնս են համապատասխանում գաղտնիության չափանիշներին, յուրաքանչյուր կոնկրետ գործիքի համար տվյալների պաշտպանվածության արագ գնահատումներ կատարելը, հեռավար հարցազրույցների՝ տվյալների գրանցմանը, փոխանցմանը և պահպանմանն ուղղված ստանդարտ ընթացակարգեր սահմանելը կամ նման հարթակների միջոցով անհատական տվյալների փոխանցումը նվազագույնի հասցնելը: Ապաստան հայցողները պետք է հարցազրույցից առաջ տեղեկացվեն գործածվող հեռավար միջոցի, ինչպես նաև գաղտնիության հետ կապված հնարավոր ռիսկերի մասին, ինչը թույլ կտա ստանալ նրանց տեղեկացված համաձայնությունը: Այն դեպքերում, երբ գործերը քննող աշխատակիցները հարցազրույցները բացառության կարգով վարում են տանից, պետք է խուսափել մասնավոր սարքավորումների օգտագործումից:

Կառուցվածքային հարմարեցումների գործարկման և ստուգման համար կարող են պահանջվել ժամանակ և ռեսուրսներ, որպեսզի դրանք տեխնիկապես լինեն հարմար, և գործարկումից հետո հնարավոր լինի խուսափել տեխնիկական սխալներից: Այս կարճ ժամանակահատվածում կարելի է ժամանակավոր կասեցնել ապաստանի ընթացակարգերը՝ որևէ մասնակցի վտանգի չենթարկելու համար: Կարևոր է, որ **հարմարեցման նման միջոցառումներում հաշվի առնվեն ապաստանի և ապաքաղաքացիության ընթացակարգերի բոլոր մասնակիցները, այդ թվում՝ թարգմանիչներն ու օրինական ներկայացուցիչները**:

Պետական պրակտիկայի օրինակներ

Ավստրիայում հարցազրույցները տեղի են ունենում կա՛մ ապակե վահանակների հետևում՝ բոլոր կողմերի միջև բավարար հեռավորության պահպանմամբ, կա՛մ

տեսակոնֆերանսի միջոցով, որի ժամանակ որոշում կայացնողն ու ապաստան հայցողը նստած են լինում նույն շենքի տարբեր սենյակներում:

Նմանապես **Շվեյցարիայում** հարցազրույցները կարճ ժամանակով կասեցվել են, որպեսզի գործարկվեն ֆիզիկական հարմարեցման անհրաժեշտ միջոցներ, մասնավորապես՝ տեղադրվեն ապակե վահանակներ, որոնք ֆիզիկական հեռավորություն են ապահովում ապաստանի գործընթացին մասնակցող անձանց միջև: Շվեյցարիայում վերջերս ընդունված արտակարգ իրավիճակի կարգավորումները նաև հստակ կերպով վերահաստատում են ընթացակարգի բոլոր փուլերում, այդ թվում՝ հարցազրույցի ժամանակ, վիրուսի փոխանցման կանխարգելման պահանջների կիրառելիությունը, որի համար Դաշնությունը կատարել է համապատասխան շենքերի անհրաժեշտ կառուցվածքային հարմարեցումները: **Լիխտենշտեյնում** ապաստանի ընթացակարգերը նույնպես շարունակվում են նման ապակե վահանակների տեղադրումից հետո:

Նորվեգիայում ապաստանի հարցերով զբաղվող ազգային մարմինը կասեցրել է բոլոր հարցազրույցները, քանի դեռ գնահատում է առցանց միջոցներով հեռավար կարգով հարցազրույցներ անցկացնելու հնարավորությունը և իրատեսականությունը: Հեռավար հարցազրույցներ անցկացնելու տարբերակները ներկայումս դիտարկվում են նաև **Ալբանիայում, Բելգիայում, Էստոնիայում, Իտալիայում և Նիդեռլանդներում:**

Իսլանդիայում Ներգաղթի տնօրինությունը նույնպես հրապարակել է մանրակրկիտ ներքին ուղեցույցներ Առողջապահության և քաղաքացիական պաշտպանության տնօրինության ընդհանուր ուղեցույցների հիման վրա այն մասին, թե ինչպես վարել ապաստանի հարցազրույցները ներկա հանգամանքներում և ինչպես արձագանքել, եթե նշաններ կան, որ դիմողը վարակված է:

Լատվիայում ապաստանի հարցազրույցները շարունակում են անցկացվել թվային գործիքների օգտագործմամբ: **Միացյալ Թագավորությունում** տեսակոնֆերանսի¹⁸ միջոցով ապաստանի հարցազրույցներ վարելու հնարավորությունը արդեն իսկ սահմանված է եղել նախքան ներկա իրավիճակը, և չնայած ընթացակարգերը ներկայումս կասեցված են, քննարկվում է այս տարբերակը հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով ապացույցներ հավաքելու հետ զուգակցելու հնարավորությունը: Այն դեպքերում, երբ հարցազրույցը անցկացվում է տեսակոնֆերանսի միջոցով, ապաստան հայցողը, թարգմանիչը, օրինական

¹⁸ Միացյալ Թագավորության կառավարություն, Ներքին գործերի նախարարություն, Ուղղորդում Ներքին գործերի նախարարության աշխատակիցների համար ապաստանի հարցազրույցների վերաբերյալ, Տարբերակ 7.0, 5 հունիսի 2019թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/807031/asylum-interviews-v7.0ext.pdf

ներկայացուցիչը և հարցազրույցը վարող աշխատակիցը կարող են գտնվել տարբեր սենյակներում: Նախքան տեսակոնֆերանսի միջոցով անցկացվող հարցազրույցը, ապաստան հայցողները պետք է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնեն էլեկտրոնային կամ սովորական փոստով: Փաստաթղթերի առձեռն ներկայացումը նույնպես հնարավոր է, երբ նման հարցազրույցները տեղի են ունենում գլխավոր գրասենյակի շենքի տարածքում: Նման հարցազրույցներ վարող՝ գործ քննող աշխատակիցները ունենում են մեկ պատասխանատու, ում դիմում են այն դեպքերում, երբ երաշխիքների հետ կապված հարցեր են առաջ գալիս, օրինակ՝ երբ ապաստան հայցողը անհանգիստ է, կամ օրինական ներկայացուցիչների կամ թարգմանիչների հետ կապված հարցեր են ծագում:

Լեհաստանում պետական մարմինները ավելի ճկուն քաղաքականություն են որդեգրել գործին առնչվող փաստաթղթերի ստացման հարցում, որոնք այժմ կարող են ներկայացվել նաև սկանավորված տարբերակով էլեկտրոնային փոստի միջոցով կամ կանոնավոր փոստով:

Բ. Հարմարեցում ընթացակարգային արդարության նպատակով

- Կարող է անհրաժեշտ լինել **առաջնահերթության սկզբունքի հիման վրա կրճատել գործերի թիվը, որոնց ընթացք է տրվում կամ կիրառել հարմարեցված կամ ճկուն վերջնաժամկետներ**, որպեսզի հնարավոր լինի կառավարել ապաստանի ընթացակարգը այնպես, որ արդարությունը չտուժի՝ հաշվի առնելով այն փաստը, որ ապաստանի ընթացակարգերում ներգրավված են բազմաթիվ կողմեր, որոնք կարող են իրենց համապատասխան գործառույթներն իրականացնելիս տուժել ներկա իրավիճակից: Առաջնահերթություն պետք է տրվի ակնհայտ հիմնավորված գործերին, ինչպես նաև հրատապ պաշտպանություն պահանջող գործերին:
- Հարկավոր է մտածել **ժամանակավոր կենտրոնացված ծառայությունների** մատուցման մասին, երբ համակարգի մի մասի հնարավորությունները սահմանափակված են, օրինակ՝ իրավաբանական օգնության կամ ներկայացուցչության հետ կապված, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում թույլ տալ ավելի լավ սահմանել ծառայությունների առաջնահերթությունը, այդ թվում՝ երբ դրանք մատուցվում են առցանց: Նման գործառնական կենտրոնացումը կարող է նաև հանգեցնել ներգրավված կողմերի միջև հաղորդակցության և համագործակցության բարելավման:
- **Ճկունություն պետք է դրսևորվի նաև այն դեպքում, երբ հարցազրույցն ընդհատվում է հիվանդության հետ կապված պատճառներով, կամ ներգրավված կողմերից մեկը** (այդ թվում՝ ապաստան հայցողները, թարգմանիչները կամ օրինական ներկայացուցիչները) **չի ներկայանում հարցազրույցին**, ինչը պահանջում է նման գործերի քննության նոր ժամանակացույց սահմանել կամ

Ոչ պաշտոնական թարգմանություն

փոփոխել կիրառելի վերջնաժամկետները: Ավելին, եթե ապաստան հայցողները չեն ներկայանում հիվանդության հետ կապված պատճառներով, սա չպետք է դիտարկվի որպես համագործակցելու նրանց պարտականության չկատարում:

Պետական պրակտիկայի օրինակներ

Ավստրիայում հարցազրույցներ իրականացվում են միայն այն դեպքում, երբ դա համարվում է խիստ անհրաժեշտ: Նշանակված հարցազրույցներին ապաստան հայցողների չներկայանալը ներկայումս որևէ հետևանքներ չի ունենում նրանց համար: Նմանապես **Շվեյցարիայում** ապաստանին առնչվող օրենսդրությամբ սահմանված է ապաստան հայցողների՝ համագործակցելու պարտականությունը: Այդուհանդերձ, երբ առկա են չհամագործակցելու հիմնավոր պատճառներ, այդ թվում՝ հիվանդությունը, ապաստան հայցողները չեն զրկվում ընթացակարգի շարունակման իրենց իրավունքից:

Շվեյցարիայում ընդունվել է արտակարգ իրավիճակի հետ կապված որոշում, որով ժամանակավորապես փոփոխվում է ապաստանին առնչվող օրենսդրությունը: Չնայած որոշ հայեցակերպեր մտահոգությունների տեղիք են տալիս, ինչպես օրինակ՝ երբ չեն պահպանվում այնպիսի կարևոր ընթացակարգային երաշխիքներ, ինչպիսին է իրավաբանական ներկայացուցչությունը, կարևոր է այն, որ այս կարգավորմամբ մեծանում է ընթացակարգային վերջնաժամկետների ճկունությունը, մինչ ընթացակարգը շարունակվում է:

Շվեդիայում ընդհանուր առմամբ ապաստանի հարցազրույցները հետաձգվում և վերանշանակվում են, երբ դիմողը կամ օրինական ներկայացուցիչը չի կարողանում ներկայանալ հարցազրույցին հիվանդության պատճառով: Այս պրակտիկան գոյություն է ունեցել նախքան ներկա իրավիճակը և շարունակում է մնալ անփոփոխ: Բացի այդ, Շվեդիայի Միգրացիոն գործակալության՝ ապահով աշխատանքային միջավայր ունենալու քաղաքականությունը պահանջում է, որ գործը քննող համապատասխան աշխատակիցը արձագանքի, երբ դիմողի մոտ հարցազրույցի կամ հանդիպման ընթացքում երևում են COVID-19 -ի ախտանշաններ:

Սցենար 2. Կուտակումների կառավարումը ապաստանի ընթացակարգերի կասեցման դեպքում

Այն դեպքում, երբ ապաստանի ընթացակարգերը կասեցվում են, խրախուսվում է այդ ընթացքում ձեռնարկել ռազմավարական գործողություններ և պատրաստություններ կուտակումների կառավարման նպատակով: Սա կօգնի թեթևացնել կուտակված ապաստանի ընթացակարգերը, երբ դրանք ամբողջությամբ վերսկսվեն: **Կուտակումների կառավարումը և համապատասխան պատրաստությունների իրականացումը կազմակերպելու նպատակով կարևոր է շարունակաբար**

մշտադիտարկել և վերլուծել կուտակումը՝ գործերի ծավալի, նախադրյալների և կազմի առումով:

Նույնիսկ նման հանգամանքներում ՄԱԿ ՓԳՀ-ն խորհուրդ է տալիս ապահովել ապաստանի հայցերի հաշվառումը և ապաստան հայցողների պատշաճ փաստաթղթավորումը: Ինչպես արդեն նշվել է, հաշվառումը կարող է կատարվել փոստով, էլեկտրոնային փոստով կամ թվային հարթակների միջոցով: Իր փաստաթղթում, որտեղ քննարկվում են արագացված կամ պարզեցված ընթացակարգերը¹⁹, ՄԱԿ ՓԳՀ-ն ներկայացնում է առաջարկություններ արդյունավետ և միաժամանակ արդար ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ: Ապաստանի ընթացակարգերի ընթացքում կուտակումների կառավարման վերաբերյալ հետևյալ առաջարկությունները բխում են այդ փաստաթղթից և դրանում ներկայացված պետական պրակտիկայից: Այս առաջարկությունները կարող են կիրառվել միաժամանակ:

Առաջարկություն 1 – Որոշման պատրաստման շարունակում

- Որոշումների պատրաստումը այն գործերով, որոնցով հարցազրույցներն արդեն կայացել են, կարող է շարունակվել: Այն դեպքերում, երբ հարցազրույց դեռ տեղի չի ունեցել, հաշվի առնելով տիրող իրավիճակը՝ կարելի է մտածել հարցազրույց չանցկացնելու մասին (չնայած սա խորհուրդ չի տրվում որպես ընդհանուր միջոց), երբ մտադրություն կա բավարարելու դիմումը, օրինակ՝ ակնհայտ հիմնավորված գործերի դեպքում: Նման դեպքերում գրավոր դիմումը կարող է համարվել որպես հիմք, որով բավարարվում է դիմողի «լսված լինելու իրավունքի» ընթացակարգային պահանջը, և որոշումը կարող է պատրաստվել առանց հարցազրույցի: Մնացած գործերը, հատկապես՝ նրանք, որոնք պահանջում են նյութական փաստերի հաստատում հարցազրույցների կամ այլ հիմնավոր ճշտումների միջոցով, չեն կարող քննվել կասեցված ընթացակարգերի պայմաններում (տես ստորև ներկայացված 2 և 3 առաջարկությունները):
- Որոշում կայացնողի կողմից որոշման պատրաստումից հետո որոշումների և ծանուցումների պաշտոնական թողարկման աշխատանքներ պետք է իրականացվեն. (ա) դրական որոշումները, այդ թվում՝ ակնհայտ հիմնավորված գործերով կայացված որոշումները, կարող են պաշտոնապես թողարկվել, դիմողը կարող է ծանուցվել, և որոշումները՝ մտնել ուժի մեջ, (բ) բացասական

¹⁹ ՄԱԿ ՓԳՀ Քննարկումների փաստաթուղթ «Արդար և արագ արագացված և պարզեցված ընթացակարգերը Եվրոպական Միությունում», 25 հուլիսի 2018թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5b589eef4.html> : Տես նաև ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), ՄԱԿ ՓԳՀ մանդատի համաձայն ՓԿՈ գործընթացում կիրառվող գործի քննության եղանակների, տերմինների և հասկացությունների օժանդակ տեղեկատու և բառարան (Բառարան), 2020թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5a2657e44.html> :

որոշումները կարող են պատրաստվել և պաշտոնապես թողարկվել կամ ծանուցվել դիմողին, եթե հնարավոր է ապահովել ընթացակարգային երաշխիքները, այն է՝ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց, և եթե խնդրո առարկա անձի վերադարձը գործնականորեն հնարավոր է: Այն դեպքում, երբ ընթացակարգային երաշխիքները կարող են ապահովվել, սակայն վերադարձը գործնականորեն հնարավոր չէ, մեկնելու վերջնաժամկետները պետք է երկարաձգվեն, որպեսզի ապահովվի անձի օրինական կացության շարունակականությունը: Եթե բողոքարկման ընթացակարգերը կասեցված են, բացասական որոշումները կարող են պատրաստվել, բայց չպետք է ուժի մեջ մտնեն կամ վերջնաժամկետներ ենթադրեն՝ անկախ նրանից, թե վերադարձը գործնականորեն հնարավոր է, թե ոչ:

- Ապաստանի ընթացակարգերը վերսկսվելուն պես հետաձգված բացասական որոշումների (բ կարգ) պաշտոնական թողարկումը և ծանուցումը պետք է սկսվի, որպեսզի չծանրաբեռնվեն վերանայման ընթացակարգերը բողոքարկումների դեպքում:

Առաջարկություն 2 – Հաշվառման և ապաստանի ընթացակարգերի միակցումը

- Այն իրավիճակներում, երբ հաշվառումը և ապաստանի հարցազրույցը իրականացվում են նույն մարմնի կողմից, և հարցազրույց դեռ տեղի չի ունեցել այն դեպքում, երբ դրա անցկացումը անհրաժեշտ է որոշում կայացնելու համար, հարցազրույցը կարող է իրականացվել հաշվառման գործընթացի հետ միասին:
- Հաշվառման և ապաստանի նմանատիպ միակցված ընթացակարգ պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ առկա է դրական որոշման բարձր հավանականություն, հատկապես՝ ակնհայտ հիմնավոր դեպքերում: Երկու գործընթացների միակցումը պետք է կատարվի քաղաքացիությունը/գործերի կադմր/տեսակը հաշվի առնելով:

Առաջարկություն 3 – Ընթացակարգերը վեկսվելուն պես կուտակումների կառավարմանը նախապատրաստվելը

- Երբ ապաստանի ընթացակարգերը կասեցված են, և հնարավոր չէ պատրաստել որոշումները, այսինքն՝ այն դեպքերում, երբ պահանջվում է նյութական փաստերի հաստատում կամ այլ կարևոր ճշտումների կատարում հարցազրույցների կամ դեմ առ դեմ շփում ենթադրող այլ միջոցներով, խրախուսվում է, որ պետական մարմիններն իրենց ժամանակը ծախսեն ընթացակարգերը վերսկսվելուն պես կուտակումների կառավարմանը ռազմավարական առումով պատրաստվելու վրա: Ուստի անհրաժեշտ միջոցառումները որոշելու համար խիստ կարևոր է կուտակված գործերի մշտադիտարկումն ու վերլուծությունը: Սա էլ ավելի կարևոր է այն դեպքերում, երբ մինչ այս իրավիճակն էլ կային կուտակված աշխատանքներ:
- Կուտակումների կառավարման միջոցառումները կարող են ներառել հետևյալ աշխատանքները (ոչ սպառիչ ցանկ). (ա) դիտարկել ՄԱԿ ՓԳՀ-ի՝ «Արդար և

Ոչ պաշտոնական թարգմանություն

արագ» վերտառությամբ փաստաթղթին համապատասխան արագացված և պարզեցված ընթացակարգերի պլանավորումը, (բ) հաշվարկել և պլանավորել գործերի քննության լրացուցիչ կարողությունների հետ կապված կարիքները՝ հաշվի առնելով ակնկալվող կուտակումները և կարողությունների ժամանակավոր մեծացման համար անհրաժեշտ բյուջեն: Ժամանակավոր աջակցության համար անհրաժեշտ աշխատակիցներ պետք է վերապատրաստվեն կուտակումների կառավարման ռազմավարության գործարկման համար, որպեսզի հնարավոր լինի ապահովել ընթացակարգերի և դրանց արդյունքների բարձր որակը, (գ) կուտակումների կառավարումը կարող է իրականացվել նաև «կուտակումների թեթևացման» ժամանակավոր նախագծերի միջոցով՝ սահմանված թիրախներով, որոնք, վերաբերում են, օրինակ, կոնկրետ քաղաքացիությանը, նկարագրին և այլ առաջնահերթություններին, որոնք սահմանվում են կուտակված աշխատանքների վերլուծության հիման վրա:

- Խրախուսվում է, որ ընթացակարգերի վերսկսման և կուտակումների կրճատման ակնկալիքով պետական մարմինները ներդրումներ կատարեն որոշում կայացնող անձնակազմի վերապատրաստման մեջ, որպեսզի հնարավոր լինի ապահովել որոշումների որակը կուտակումների կրճատման միջոցառումներ իրականացնելիս: Սա օգնում է նվազեցնել որակի անկումը կուտակումների կրճատման ընթացքում, երբ գործեր քննող անձնակազմը որոշումները կայացնում է բարձր լարման պայմաններում:

Պետական պրակտիկայի օրինակներ

Կուտակումների կառավարումը ընթացակարգերի կասեցվածության ընթացքում տարածված է հատկապես ԵՄ+ երկրներում: Օրինակ՝ **Նիդերլանդներում**, պետական մարմինները շարունակում են որոշումների պատրաստումը, քանի դեռ ընթացակարգերը կասեցված են, որպեսզի կրճատեն կուտակումների ծավալը:

Լիտվայում, որտեղ ընթացակարգերը ընդհանրապես կասեցված են, ապաստանի վերաբերյալ որոշումներ կայացվում են, եթե գործի նյութերը թույլ են տալիս դա անել:

Ավստրիայում, որտեղ ընթացակարգերը կասեցված են, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցազրույցները խիստ անհրաժեշտ ու անհետաձգելի են, բացասական որոշումները բողոքարկելու վերջնաժամկետները նույնպես կասեցված են, որպեսզի ապաստան հայցողները կարողանան խորհրդակցել իրենց իրավաբանական խորհրդատուների հետ այնքանով, որքանով թույլ են տալիս տեղաշարժի ընթացիկ սահմանափակումները:

Եզրափակիչ ուղորդում

Ոչ պաշտոնական թարգմանություն

- Կուտակումների կառավարման ինչ միջոցառումներ ու պատրաստություններ էլ որ իրականացվեն, կարևոր է, որ ապաստանի և ապաքաղաքացիության ընթացակարգերում սովորաբար ներգրավված բոլոր շահառուները պատշաճ կերպով տեղեկացված և վերապատրաստված լինեն նման միջոցառումների վերաբերյալ,
- Ապաստանի և ապաքաղաքացիության ընթացակարգերի ցանկացած կասեցում պետք է լինի ժամանակավոր և կանոնավոր կերպով վերանայվի՝ համոզված լինելու համար, որ նման կասեցումը դեռևս անհրաժեշտ է՝ ելնելով իրավիճակից, և որ այն համափաշ է հանրային առողջությունը պաշտպանելու նպատակին,
- Ընթացակարգերը կասեցնելու որոշումը չպետք է բացասաբար ազդի հատուկ կարիքներ ունեցող դիմողների համար նախատեսված ընթացակարգային երաշխիքների վրա,
- Ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթերի վավերականությունը, որոնց վրա ազդում է կասեցումը, պետք է ինքնաբերաբար և հնարավորության դեպքում էլեկտրոնային կերպով երկարաձգվի, քանի դեռ գործի քննությունը կասեցված է,
- ԵՄ անդամ պետությունները կարող են նաև դիտարկել Ապաստանի հարցերով աջակցության եվրոպական գրասենյակի փորձառությունից և աջակցությունից օգտվելու հնարավորությունը կուտակումների կառավարման հարցում այն իրավիճակներում, երբ ապաստանի ընթացակարգերը շարունակվում են որպես կուտակումների կառավարման միջոց²⁰, ինչպես նաև այն իրավիճակներում, երբ ապաստանի ընթացակարգերը կասեցվել են, և սպասվում է ընթացակարգերի վերսկսում և կուտակումների կրճատում:

6. Համայնքի ներգրավում և ռիսկերի ուսուցում

COVID-19 համավարակի համատեքստում տեղեկատվության տրամադրումը կարող է կյանքեր փրկել և կարևոր նշանակություն ունի առողջապահական և այլ հիմնական ծառայությունների հավասար և ոչ խտրական հասանելիությունն ապահովելու հարցում: Հանրային առողջապահական կանոնների և խորհուրդների պահպանումը, ինչպես նաև համապատասխան ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար յուրաքանչյուր ոք ունի իր համար հասկանալի լեզվով և կերպով մատուցված հուսալի և թարմ տեղեկատվության, ինչպես նաև այդ տեղեկատվությունը ստուգելու և հարցեր տալու կարիք: Սա հավասարապես (եթե ոչ ավելի) կարևոր է ապաստան հայցողների և փախստականների համար, որոնք կարող են ապավինել

²⁰ Ապաստանի հարցերով եվրոպական գրասենյակի փորձն ու աջակցությունը կուտակումների կառավարման հարցում, ընդհանուր նկարագրությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://easo.europa.eu/operational-support/types-operations>:

հաղորդակցության այլ միջոցներին, կարող են բախվել լեզվական խոչընդոտների հետ կամ ունենալ մշակութային նախապատվություններ, չունենալ նույն համայնքային և հասարակական կառուցվածքները, որոնց կարող են ապավինել իրենց ապաստանի երկրում, կամ չունենալ տեղեկատվության տարածման այնպիսի ուղիներից օգտվելու հնարավորություն, ինչպիսիք են վեբկայքերը, հեռուստահեռարձակումները կամ զանգերի կենտրոնները/խորհրդատվական գծերը: Նմանապես քաղաքացիություն չունեցող անձինք և ներքին տեղահանված անձինք կարող են հեշտությամբ անտեսվել տեղեկատվական քարոզարշավներում, և համապատասխան մարմիններից կարող է պահանջվել նրանց հետ կապվելու հատուկ ջանքեր գործադրել: Ուստի ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է հետևյալ միջոցառումները.

- **Փախստականներին, ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց և ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ-ներ) ներառել COVID-19-ին առնչվող ռիսկերի ուսուցման և տեղեկատվության տարածման նախաձեռնություններում՝** հատուկ ուշադրություն դարձնելով նրանց լեզվին և մշակութային նախապատվություններին և տեղեկատվությունը երեխաների, տարեցների, փոքրամասնություն կազմող խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցնելու անհրաժեշտությամբ²¹:
- **Օգտագործել տեղեկատվության հաղորդման բազմաթիվ ուղիներ,** այդ թվում՝ ինչպես գրավոր նյութեր, այնպես էլ հաղորդակցության այլ միջոցներ (ինչպես օրինակ՝ տեսա-, ռադիո- և հեռուստատեսային ուղերձներ, տեղեկատվության հաղորդման թվային միջոցներ, առցանց հարթակներ և այլն), որոնք ուղղված են տարբեր խմբերի կարիքների բավարարմանը՝ անկախ նրանից, թե նրանք բնակվում են ընդունելության կենտրոններում, ոչ ֆորմալ բնակավայրերում, անտուն են կամ ապրում են ընդունող համայնքներում: Դրանով պայմանավորված՝ կարող է անհրաժեշտ լինել հեշտացնել համացանցի հասանելիությունը բոլոր նշված կացարանային պայմաններում ապրող անձանց համար: Դա անելիս պատշաճ ուշադրություն պետք է հատկացնել տվյալների պաշտպանության սկզբունքներին, և համայնքները պետք է տեղեկացվեն մասնավոր կյանքի իրենց իրավունքներին սպառնացող հնարավոր ռիսկերի մասին: Հարկավոր է խրախուսել մասնավոր կյանքի իրավունքը պահպանող հարթակների և գործիքների գործածությունը բոլոր այն դեպքերում, երբ դա իրատեսական է: Երբ նման հարթակներ և գործիքներ առկա չեն և/կամ հասանելի չեն խնդրո առարկա խմբերի համար, պակաս ապահով հաղորդակցական ուղիների գործածությունից ծագող՝ տվյալների

²¹ Տես նաև ՄՄՀ, COVID-19. Ինչպես ներառել մարգինալացված և խոցելի անձանց ռիսկերի մասին հաղորդակցության և համայնքային ներգրավման մեջ, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://interagencystandingcommittee.org/covid-19-how-include-marginalized-and-vulnerable-people-risk-communication-and-community-engagement>, ԱՀԿ, ՅՈՒՆԻՄԵՖ և and ԿԽՄՖ. Ռիսկերի ուսուցում և համայնքային ներգրավում, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.communityengagementhub.org/wp-content/uploads/sites/2/2020/02/IFRC-nCov-RCCE-Guide-0202_EN.pdf :

Ոչ պաշտոնական թարգմանություն

պաշտպանությանն առնչվող ռիսկերը կարելի է մեղմացնել անձնական տվյալների փոխանցումը նվազեցնելու միջոցով:

- **Փախստական, ՆՏԱ և քաղաքացիություն չունեցող անձանց համայնքի ներգրավումը տեղեկատվական քարտզարշավների նախագծման, տարածման և գնահատման աշխատանքներում** զգալիորեն մեծացնում է նման քարտզարշավների ազդեցությունը և դրանով հեշտացնում վիրուսի կանխարգելմանն ուղղված հանրային առողջապահական աշխատանքները:
- **Մշտադիտարկել և արձագանքել վիրուսի վերաբերյալ ցանկացած ապատեղեկատվության և առասպելների,** քանի որ դրանք կարող են բացասաբար ազդել պետությունների՝ համավարակին պատասխանելու ջանքերի վրա:

Պետական պրակտիկայի օրինակներ

Իտալիայում գործում է ազգային թեժ գիծ 36 լեզուներով, և ՄԱԿ ՓԳՀ-ի ու Ինտերսոսի²² օգնությամբ ստեղծվել է թվային կարողությունների կառուցման հարթակ, որի թիրախում փախստականների կազմակերպություններն են: «JUMA» կոչվող բազմալեզու տեղեկատվական պորտալը փախստականներին և ապաստան հայցողներին թույլ է տալիս 15 լեզուներով ստանալ տեղեկատվության COVID-19-ի, ինչպես նաև առողջապահական խորհուրդների, կանոնների և տեղաշարժի սահմանափակումների, վարչական ընթացակարգերի և առկա ծառայությունների մասին²³:

Ավստրիայում գործում է մի նորարարական հավելված²⁴, որը թույլ է տալիս փախստականներին և ապաստան հայցողներին ստանալ անմիջական և թարմացվող տեղեկություններ պետական մարմիններից և հեռուստակոնտենտը ենթագրերի միջոցով թարգմանում է տարբեր լեզուներով՝ թույլ տալով ոչ գերմանախոս անձանց հետևել ավստրիական հեռուստատեսությանը: Հավելվածը գործում է Ավստրիայի կառավարության աջակցությամբ:

²² Թվային կարողությունների կառուցման հարթակը հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://www.partecipazioneilab.org> :

²³ Բազմալեզու «JUMA» պորտալը հասանելի է հետևյալ հասցեով՝ https://coronavirus.jumamap.com/it_it/

²⁴ Այս հավելվածը հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://www.uugot.it/>:

Ֆրանսիայում COVID-19-ի մասին տեղեկատվության փոխանակումը տեղի է ունենում առցանց հարթակի միջոցով²⁵, որը տնօրինվում է փախստականների հաշվառման և ընդունելության համար պատասխանատու միջնախարարական պատվիրակության (Diair) կողմից ՄԱԿ ՓԳՀ-ի և մի խումբ հասարակական կազմակերպությունների հետ գործընկերությամբ: Ընթացիկ աշխատանքները նաև ներառում են վիրտուալ գործողություններ, որոնք ուղղված են COVID-19-ի ճգնաժամի ընթացքում սոցիալական կապերի պահպանմանը, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների հետ՝ ընդունելության կենտրոններում:

Նորվեգիայում ապաստան հայցողների համար հասանելի է տեղեկատվություն 24 տարբեր լեզուներով կառավարության վեբկայքի միջոցով²⁶: **Բուլղարիայում** գործում է վեց հիմնական լեզուներով աշխատող հատուկ թեժ գիծ, և առկա է հատուկ ֆեյսբուքյան էջ:

Սերբիայում ՄԱԿ ՓԳՀ-ն և գործընկերները կանոնավոր կերպով հաղորդակցվում են խնդրո առարկա անձանց հետ՝ վերջիններիս տեղեկացնելով COVID-19-ի իրավիճակի, ինչպես նաև արտակարգ դրության մասին սոցիալական լրատվամիջոցների և թեժ գծերի միջոցով բոլոր համապատասխան լեզուներով աշխատող հատուկ նշանակված թարգմանիչների օգնությամբ: Բացի այդ, գործընկերները տրամադրում են առցանց հոգեւոցիալական աջակցություն և սերբերենի դասեր են անցկացնում, ինչպես նաև աջակցում կրթության հասանելիությանը առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար առցանց հարթակների միջոցով:

Մալթայում Առողջապահության նախարարությունը COVID-19-ի մասին տեղեկատվական թերթիկներ է թարգմանել ապաստան հայցողների և փախստականների համար կարևոր լեզուներով և համագործակցում է ՄԱԿ ՓԳՀ-ի հետ համապատասխան լեզուներով աշխատող թարգմանիչների խումբ ունենալու ուղղությամբ, որոնց կարիքը կարող է լինել այն դեպքերում, երբ ապաստան հայցողներն ու փախստականները զանգահարեն ազգային օգնության գծին՝ COVID-19-ի հետ կապված տեղեկատվություն կամ աջակցություն խնդրելու:

Իռլանդիայում իշխանությունները օգնության գիծ են բացել կացարանային կենտրոններում ապրող ապաստան հայցողների համար, որը գործելու է օրական տասներկու ժամ՝ շաբաթը յոթ օր, և թարգմանվել են մի շարք ուղեցույց փաստաթղթեր,

²⁵ Առցանց հարթակը հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://www.refugies.info/homepage>:

²⁶ 24 լեզուներով հասանելի տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ <https://helsenorge.no/coronavirus> :

Ոչ պաշտոնական թարգմանություն

որոնք կօգնեն ավելի լավ թիրախավորել ապաստան հայցողներին և փախստականներին²⁷:

ՄԱԿ ՓԳՀ/Եվրոպայի տարածաշրջանային բյուրո
9 ապրիլի 2020թ.

²⁷ Իռլանդիայի կառավարության կողմից կատարված թարգմանությունների մասին ընդհանուր տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հղմամբ՝ <https://www.hse.ie/eng/services/news/newsfeatures/covid19-updates/partner-resources/covid-19-translated-resources/>: Այս տեղեկատվությունը հասանելի է նաև ՄԱԿ ՓԳՀ-ի օգնության էջում՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.unhcr.org/en-ie/news/stories/2020/3/5e6b7e7c4/covid-19-update-to-unhcr-ireland-services.html> :